ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՆԱԽԱՐԱՐ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МИНИСТЕРСТВО ОБРАЗОВАНИЯ
И НАУКИ

# МИНИСТР

REPUBLIC OF ARMENIA, MINISTRY OF EDUCATION AND SCIENCE

# MINISTER

375010, Երևան, Գլխավոր պողոտա, Կառավարական տուն 3
Հեռ./Тел./Tel.: 52 66 02, ֆաքս/факс/fax (374 10) 52 73 43
375010, Ереван, Главный проспект, Дом правительства 3
375010, Main Avenue, Government House 3, Yerevan
E-mail: info@edu.am, www.edu.am

№ 21-08-Q8/1497 « 07 » 11 2008

«Անուշավան Աբրահամյան» կրթական
հիմնադրամի նախագահ պարոն Ա. Աբրահամյանին

*Հարգելի պարոն Աբրահամյան*

*Ջերմորեն շնորհավորում եմ Ձեզ Հայաստանի Հանրապետությունում «Անուշավան Աբրահամյան» կրթական հիմնադրամի գործունեության 4-րդ տարելիցի առթիվ:*

*Հիմնադրամը իր գործունեության այս կարճ ժամանակահատվածում զգալի ներդրում է կատարել հանրապետության 10 մարզերում գործող նախնական /արհեստագործական/ մասնագիտական կրթական համակարգի նյութատեխնիկական բազայի հարստացման, շենքերի և շինությունների նորոգման, ներքին հարդարման աշխատանքների կատարման և ջեռուցման համակարգերի անցկացման ուղղությամբ:Հատկանշական է հիմնադրամի աջակցությունը հանրապետությում մասնագիտական կրթական համակարգի բարեփոխումների իրականացմանը և որակյալ արհեստագործ մասնագետների պատրաստման ուղղությամբ:*

*Հարգարժան պարոն Աբրահամյան, ղեկավարին բնորոշ Ձեր գործիմացությամբ և պահանջկոտությամբ, բարեգործին յուրահատուկ Ձեր հոգատար և կարեկից վերաբերմունքով արժանացել եք համակարգի՝ Ձեր գործընկերների հարգանքին և սիրուն:*

*Ձեր աշխատանքը բարձր է գնահատվել ՀՀ ԿԳ նախարարության կողմից և Դուք արժանացել եք նախարարության բարձրագույն պարգևին և 2007 թվականին պարգևատրվել եք նախարարության ոսկե հուշամեդալով:*

*Լիահույս եմ, որ այսուհետ ևս Ձեզ հատուկ նվիրումով ու հաստատակամությամբ կշարունակեք դեպի լույսն ու բարին տանող Ձեր առաքելությունը՝ ի փառս հայոց անկախ պետության հզորացման:*

*Մաղթում եմ Ձեզ քաջ առողջություն, բարեգործական գործունեության նորանոր հաջողություններ և հաղթանակներ:*

*Բարին ընդ Ձեզ:*

*Հայաստանի Հանրապետության*
*կրթության եւ գիտության նախարար* /Ս.Սեյրանյան